

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԴՐԱՆՑ ԳՅՈՒՂԱԿԱՆ**  
**ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**  
**ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**25 ՄԱՐՏԻ 2014թ.**

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 77.1-77.6-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2014 թվականի մարտի 17-ի N36-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Խդրանց գյուղապետարանում 2014 թվականի մարտի 25-ին իրականացվեց վարչական հսկողություն հետևյալ բնագավառներում՝

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, հողօգտագործում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Խդրանց գյուղական համայնքի ղեկավարը վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Խդրանց գյուղական համայնքի ղեկավարին:

**ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում վարչական**

**հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝**

**Ս. Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի Խդրանց**

**գյուղական համայնքի ղեկավար՝**

**Գ. Սարգսյան**

Հավելված

ՀՀ Սյունիքի մարզի իրրրանց գյուղական համայնքում  
իրականացված վարչական հսկողության արդյունքների  
ամփոփման վերաբերյալ

25-03-2014թ. N1 արձանագրության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆՔԻ ՄԱՐԶԻ ԽԴԻՒՆՑ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏԱԿԵՐՎԱԾ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԸ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
Համայնքի ղեկավարի ներկայացմամբ կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ որոշման առկայություն	X	X	Պահպանված չէ	Խախտվել է "Տերական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով սահմանված պահանջը	Առաջարկվում է ընդունել համապատասխան իրավական ակտ	Եռամսյա ժամկետում
Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն	X	X	Պահպանված չէ	Խախտվել է "Տերական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 33-րդ կետով սահմանված պահանջը	Առաջարկվել է ընդունել համապատասխան որոշում	Եռամսյա ժամկետում
Տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերի հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն			Պահպանված չէ	Խախտվել է "Տերական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով սահմանված պահանջը	Առաջարկվել է ընդունել համապատասխան որոշում	Եռամսյա ժամկետում
Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն			Պահպանված չէ	Խախտվել է "Տերական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով սահմանված պահանջը	Առաջարկվել է ընդունել համապատասխան որոշում	Եռամսյա ժամկետում

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
Համայնքի ավագանու առնվազն երկու ամիսը մեկ անգամ կայացած նիստերի արձանագրությունների առկայություն	X	X	Պահպանված չէ	Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի երկրորդ մասով սահմանված պահանջը	Առաջարկվել է այսուհետ ավագանու նիստերը հրավիրել օրենքով սահմանված ժամկետներում	Անհապաղ
Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված աշխատակազմի գործակարության կարգի առկայություն	X	X	Պահպանված չէ	Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով սահմանված պահանջը	Առաջարկվել է ընդունել համապատասխան իրավական ակտ	Երկամսյա ժամկետում
Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն	X	X	Պահպանված չէ	Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 10,1-րդ կետով սահմանված պահանջը	Առաջարկվել է հանդես գալ համապատասխան առաջարկությամբ	Երկամսյա ժամկետում
Տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույթաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը ավագանու հաստատմանը ներկայացնելու առկայություն	X	X	Պահպանված չէ	Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով սահմանված պահանջը	Առաջարկվել է հանդես գալ համապատասխան առաջարկությամբ՝ նախագծերը ներկայացնելով համայնքի ավագանուն	Երկամսյա ժամկետում
Օրենքով սահմանված կարգով համայնքի զարգացման բառայա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերի վերաբերյալ հանրային բաց խումբեր և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ աշխատանքների առկայություն	X	X	Պահպանված չէ	Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 33,1-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով սահմանված պահանջը	Առաջարկվել է այսուհետ կազմակերպել նանատիպ խումբեր	Անհապաղ